ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

18 ապրիլի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

56
(2722)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՐԳԻՇՏԻ ՔՅԱՐԱՄՅԱՆԸ ՉԻ ՊԱՏԺԻ ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ

Ապրիլի 4-ին ՀՀ Ազգային ժողովի մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձաժողովի նիստում ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանի ցուցաբերած պահվածքը, որը ուղեկցվում էր սպառնալիքներով, խուլիգանական վարքագծով, կներվի: «Ժողովուրդ» օրաթերթը ՀՀ քննչական կոմիտեից պարզեց, որ Հովհաննիսյանի նկատմամբ քրգործի հարուցումը մերժելու մասին որոշում է կայացվել, ասել է թե՝ քաղաքական որոշումը կայացված է, իրավապահները պետք է հիմնավորեն դա:

Ինչպես հայտնի է, այդ օրը ընդդիմության միասնական թեկնածու Էդգար Ղազարյանի նկատմամբ Արթուր Հովհաննիսյանը ցուցաբերեց ոչ միայն անհարգալից վերաբերմունք, այլեւ խուլիգանական պահվածքով սպառնաց կտրել Ղազարյանի ականջներն ու լեզուն: Նա նաեւ հայտարարեց, որ հանձնաժողովի նիստը խանգարում է, ինչը կարող են ներկաները արձանագրել: ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանին հասցեագրված նամակը՝ ԱԺ ՄԻՊ հանձնաժողովի նախագահ Թագուհի Թովմասյանի կողմից, ըստ էության, մերժվել է: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացրել էր, որ ՀՀ գլխավոր դատախազին ուղղված գրությունը հասցեագրվել էր ՀՀ քննչական կոմիտեին: Երեկ հետաքրքրվեցինք կոմիտեից, թե ինչ են արել Թովմասյանի գրության հետքերով, հարուցվել է կամ կհարուցվի արդյոք քրեական գործ Արթուր Հովհաննիսյանի նկատմամբ: Ի պատասխան՝ Քննչական կոմիտեից պաշտոնապես հայտնեցին. «Քրեական վարույթ չնախաձեռնելու մասին արձանագրություն է կազմվել այդ նիստի ընթացքում հնչած արտահայտությունների վերաբերյալ ներկայացված հաղորդումների առթիվ քրեական վարույթ նախաձեռնելու հիմքերի բացակայության պատճառով»:

Պարզեցինք, որ խուլիգանական վարքագիծ դրսեւորած Արթուր Հովհաննիսյանն ինքն էլ է իրավապահներին գրություն ուղարկել՝ պահանջելով քրգործ հարուցել այդ օրը կատարվածի առիթով, միայն թե պարզ չէ՝ Հովհաննիսյանն ում է մեղադրում:

Արձանագրենք, որ տեղի ունեցածը անպատժելիության վառ դրսեւորում է. եթե ՔՊ խմբակցության քարտուղարն է սպառնում, դա ներվում է, եթե այլ քաղաքացի է դա անում, պատժվում է: Ահա Նիկոլ Փաշինյանի կերտած արդարադատության պտուղները:

Վերջին օրերին իշխող ուժի անդամները մեկը մյուսի հետեւից սկանդալների կենտրոնում են հայտնվում: Մեկ ԱԺ նախագահն էր սկանդալի կենտրոնում, մեկ ՔՊ խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանն էր, որ ՄԻՊ թեկնածուի ընտրության օրը՝ հանձնաժողովի նիստի ժամանակ, վիրավորանքներով խոսեց ընդդիմության թեկնածուի հետ՝ սպառնալով մարմնի տարբեր մասեր կտրել: Օրեր առաջ էլ համացանցում հայտնվեց ֆեյսբուքյան նամակագրության «սքրինը», որտեղ երեւում էր՝ ինչպես է ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը սեռական հայհոյանքներով խոսում քաղաքացիների հետ: Ուշագրավ է, որ նախկինների արատավոր վարքուբարքի մասին աղաղակող քաղաքական ուժն իր ներսում անգամ չի քննարկում այս աղմկահարույց դեպքերը, ավելին՝ տարբեր անհեթեթ պատճառաբանություններով փորձում են արդարացնել իրենց թիմակիցների անթույլատրելի արարքները: Այս միջադեպերից հետո չհնչեց գեթ մեկ ներողություն ՔՊ-ականների կողմից, փոխարենը նրանք մեկը մյուսի հետեւից շտապեցին ներողություն խնդրել ծանրամարտի Եվրոպայի աշխարհի առաջնության բացման ժամանակ թշնամի երկրի դրոշն այրելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նման քննարկում չի եղել նաեւ երեկ կայացած ՔՊ նիստում, որը անցնում էր ԱԺ 334 սենյակում: Տպավորություն է, որ միջազգային հանրությունը եւս պատրաստ է աչք փակել գործող իշխանության նույնիսկ ամենալկտի արարքների վրա: Ստացվում է՝ ՔՊ-ականներն արտոնյալ են. այն, ինչ չէր կարելի նախկիններին, կարելի է գործող իշխանություններին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ՝ ՀՀ նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի որդին՝ Արգամ Աբրահամյանը, ինչ քրեական վարույթի շրջանակներում է հրավիրվել ՀՀ քննչական կոմիտե եւ որպես վկա հարցաքննվել: Պարզվում է՝ Կոտայքի նախկին մարզպետ Կարապետ Գուլոյանի եւ նրա հոր՝ ԱԺ նախկին պատգամավոր Մուրադ Գուլոյանի գործունեության եւ մարզում առկա հողերի մասով կա քրեական վարույթ, որի շրջանակներում էլ Արգամ Աբրահամյանին որպես վկա հրավիրել են ՀՀ քննչական կոմիտե՝ հարցաքննության: Նշենք, որ Գուլոյաններն ու Աբրահամյանները խնամիներ են: Հիշեցնենք, որ ապրիլի 14-ին ArmLur.am-ը արձանագրել էր, թե ինչպես է նախկին վարչապետ Հովիկ Աբրահամյանի որդին՝ Արգամ Աբրահամյանը, դուրս գալիս ՀՀ քննչական կոմիտեից, եւ փորձել էր անձամբ նրանից հարցնել, թե ինչու է հրավիրվել կոմիտե: Աբրահամյանը հրաժարվել էր մանրամասնել իր այցի մասին:

Նիկոլ Փաշինյանը մարտի 14-ին լրագրողների հետ զրույցում հայտարարել էր, թե Երեւանի բազմաբնակարան շենքերում տարեկան 700 վերելակ է փոխարինվելու: Նկատենք, որ այսպիսի տեղեկատվություն նոյեմբերին հայտարարել էր նաեւ Երեւանի նախկին քաղաքապետ Հրաչյա Սարգսյանը: Սակայն նկատենք, որ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը ապրիլի 14-ի կառավարության նիստում տեղեկացրեց, որ 2023-ին ծրագրվում է փոխարինել 100 վերելակ համայնքային բյուջեով ու եւս 473 վերելակ՝ կառավարության ֆինանսավորմամբ: Միեւնույն ժամանակ «Սիվիլնեթ»-ը նկատում է, որ այժմ քաղաքապետարանի կայքում տեղադրված է միայն 500 վերելակի ձեռք բերման մրցույթ: Ստացվում է, որ վարչապետի հայտարարությունը, թե՝ «մենք Երեւանում դուրս ենք եկել տարեկան 700 վերելակ փոխելու տեմպի վրա», չի համապատասխանում իրականությանը: Փաստացի խոստացված 700 վերելակից այժմ պլանավորվում է տեղադրել 573-ը, սակայն մրցույթ հայտարարված է միայն 500-ի մասով:

ՉԵՆ ԴԻՄԱՆՈՒՄ

ՔՊ–Ն ՑԱՅՏՆՈՏԻ ՄԵՋ Է

«Ժողովուրդ» օրաթերթը հայաստանյան ներքաղաքական կյանքում տեղի ունեցող վերջին իրադարձությունների շուրջ զրուցել է քաղաքագետ Կարեն Քոչարյանի հետ:

-Պարոն Քոչարյան, վերջին օրերին իշխող ուժի անդամները գրեթե ամեն օր սկանդալի կիզակետում են հայտնվում. ԱԺ նախագահը քաղաքի կենտրոնում թքում է քաղաքացու վրա, ՔՊ խմբակցության քարտուղարը ԱԺ հանձնաժողովի նիստի ժամանակ հայհոյանքներով է խոսում ընդդիմության թեկնածուի հետ, սպառնում է նրան մարմնի տարբեր մասեր կտրելով: Օրեր առաջ էլ համացանցում հայտնվեց ֆեյսբուքյան նամակագրություն, որտեղ երեւում էր՝ ինչպես է ՔՊ խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանը սեռական հայհոյանքներով խոսում քաղաքացիների հետ: Ինչպե՞ս կգնահատեք ՔՊ-ականների վարքագիծը, արդյոք անպատժելիությունը չէ՞ այս ամենի պատճառը:

-Տղերքը չեն դիմանում արդեն, ինչ-որ բան այն չէ ՔՊ ներսում, ցայտնոտի մեջ են, մեկը մյուսի հետեւից սխալներ են անում:

-Ինչի՞ն չեն դիմանում, ճնշումնե՞ր կան:

-Ճնշումներին՝ թե՛ ներքին, թե՛ արտաքին, բոլոր տեսակի, այդ թվում՝ նաեւ իրենց ներքին ճնշումներին, քանի որ իրենց մոտ էլ է ճաշ եփվում: Փաշինյանի կողմից կան ճնշումներ. Աշոտ Փաշինյանի հերքումը Ձեզ վկա: Իրենք հենց սկզբից էլ սկանդալների հակված են եղել. այն ժամանակ մի մասը կարողանում էր զսպել, հիմա տղաների նյարդերն այլեւս չի հերիքում, ճնշումներին չեն դիմանում:

-Իսկ արտաքին ի՞նչ ճնշումներ կան:

-Իրենք են ասում, որ ո՛չ Արեւմուտքը, ո՛չ Ռուսաստանն իրենց չեն օգնում, ամեն ինչը թղթի վրա է մնում:

-Պարոն Քոչարյան, եթե նախկինում ՀՀԿ-ական որեւէ պատգամավոր կամ ԱԺ նախագահը հայհոյեր կամ թքեր քաղաքացու վրա, այստեղ գործող դեսպանությունները, միջազգային կազմակերպությունները մեծ աղմուկ կբարձրացնեին, բայց հիմա լռում են: Ստացվում է՝ այն, ինչ չէր կարելի նախկիններին, կարելի՞ է գործող իշխանություններին:

-Ինձ համար միջազգային հանրություն ասվածը վաղուց արդեն չկա. այնտեղ ոչ թե կրկնակի, այլ եռակի ստանդարտներ են. այնքան բազմազան ստանդարտներ ունեն, որ վաղուց նեխած հոտ է գալիս այդ ամենից: Երբ այլեւս պետք չլինեն Արեւմուտքին կամ Ռուսաստանին, կօգտագործեն եւ դեն կնետեն նրանց, ինչպես տհաճ օգտագործված խաղալիք:

-Մեր հանրությունն էլ որեւէ կերպ չի արձագանքում ՔՊ-ականների այս վարքագծին. սա ինչո՞վ եք պայմանավորում:

-Քաղաքացիները երբեք էլ ձայն չեն հանել. ով այն ժամանակ ձայն էր հանում, հիմա էլ նույն մադիկ են ձայն հանում, իսկ ով ձայն չէր հանում, այն ժամանակ վերցնում էր 5 կամ 10 հազարը , գնում ու իշխանություններին էր ձայն տալիս: Հիմա էլ 3000 թոշակ են բարձրացնում, նորից գնում ձայն են տալիս այս իշխանություններին: Քաղաքացիների մեծ մասն այդպիսին է, ցավոք սրտի. դա գալիս է հասարակության դեգրադացվածությունից: Եթե նորմալ, ոչ դեգրադացված, հասուն, կրթված հասարակությունում լիներ այս ամենը, անմիջապես հրաժարականներ կլինեին:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԱՂՄԿԱՀԱՐՈՒՅՑ ԼՈՒՍԱՆԿԱՐ

«ՓՆԹԻ ՈՒ ԱՆՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԵՆ»

Մինչ իշխանությունը, իր տարբեր լծակները օգտագործելով, ֆինանսավորում է ոճաբան Արամ Նիկոլյանի ֆայլը, որ նա ապրիլի 14-ին՝ ծանրամարտի Եվրոպայի առաջնության բացման արարողության ժամանակ, Ադրբեջանի դրոշը վառել եւ դուրս էր հանել Կարեն Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրի դահլիճից, նույն «հայրենասեր» իշխանության ներկայացուցիչները առիթը բաց չեն թողնում տարբեր դեպքերով մոտենալու ադրբեջանական դրոշին:

Ներկայացնում ենք լուսանկարը. ⇨

Իսկ, ահա, ընդդիմադիր «Հայաստան» խմբակցության պատգամավոր Գեղամ Մանուկյանը, անդրադառնալով վերոնշված լուսանկարին, ArmLur.am-ի հետ զրույցում ասաց, որ սա խոսում է այն մասին, թե որքան փնթի, որքան անպատասխանատու են ամեն ինչին նայում:

«Դա ցանկացած հայ մարդ կարող էր անել, եւ իշխանությունը պետք է պատրաստ լիներ ցանկացած սցենարի, որ մրցութին մասնակցելու է Ադրբեջանը, Թուրքիան, եւ այստեղ գոնե սցենարային աշխատանքներ պետք է տանեին, որ նման դեպք չլիներ, բայց այս իշխանություններին եւ նրանց սպասարկողների համար դա սովորական է: Հիմա չգիտեմ, չեմ կարող ասել՝ ով է դրել, ինչու է դրել ադրբեջանական դրոշի գույներով ավազե ժամացույցները, ինչքանով է ուղեղը աշխատել: Սա խոսում է այն մասին, թե որքան փնթի, որքան անպատասխանատու են ամեն ինչին նայում, եւ սա մի կամ երկու դրվագը չէ: Իսկ ինչ վերաբերում է երկրի վարկանշին, տարիներ շարունակ այնքան է հեղինակազրկվել, լրիվ այլ պատճառներով, օրինակ՝ որ իր երկրի սահմանները չի կարողանում պաշտպանել. երկիր, որտեղ մի իշխանություն պարտության է տանում, հետո նորից իշխանության վերադառնալու հայտ է ներկայացնում ընտրվում եւ շարունակում է իր վերընտրությունը հպարտությամբ տանել»:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԳՈՒՄԱՐԸ ՉԻ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի խմբագրությունն է դիմել իտալահայ Գեւորգ Օրֆելյանը: Նա պատմել է, որ տեւական ժամանակ է, ինչ կանգնել է խնդրի առաջ: Նախկին դատավոր Գագիկ Խանդանյանի որդին՝ Վահագն Խանդանյանը, իտալահայ քաղաքացու խոսքերով, իրենից մոտ 214 հազար դոլար գումար է վերցրել եւ հետ չի վերադարձնում, ինչի պատճառով Գեւորգ Օրֆելյանը դիմել է դատարան. «Շատ լավ ընկերներ ունեմ Հայաստանում, եւ ինձ ներկայացուցրած են Վահագն Խանդանյանի հետ: Վահագն Խանդանյանը դատավորներու ընտանիք ունի, նրա պապան եւ եղբայրը դատավորներ են, եւ խաբված եմ զգում, որովհետեւ այս պարոն Խանդանյանը շատ մեծ փողեր է ուզել, ես իրեն տվել եմ՝ իմանալով, որ իմ լավ ախպերս է, բայց մի կոպեկ հետ չի վերադարձրել: Ես Վահագին փողը տվել եմ, քանի որ ունի հայր մը, որին ես շատ հարգում էի, ու այդպես ինձ ուզել է խաբել: Քանի անգամ զանգել եմ իրեն, չի պատասխանել, եւ ես դատարան եմ դիմել: Ինչ կլինի հետո՝ չեմ կարող ասել»: Նշենք, որ Վահագն Խանդանյանի եղբայրն այժմ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանի դատավոր Ռաֆիկ Խանդանյանն է, իսկ հայրը Գագիկ Խանդանյանն է, որի լիազորությունները դադարեցված են, եւ մինչ օրս նա բողոքարկումների գործընթացում է:

ՀԱՂԹԵԼ Է ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ



ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Հրաչյա Աղաբեկյանը հաղթել է Երեւանի քաղաքապետարանին:

Բանն այն է, որ այս տարվա մարտի 17-ին Հրաչյա Աղաբեկյանին ազատել էին «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից, ինչի համար նա դիմել էր դատարան, արդյունքում գործը նախագահող դատավոր Ռուբեն Ներսիսյանը որոշել է Հրաչյա Աղաբեկյանին վերականգնել «Թափառող կենդանիների վնասազերծման կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում, իսկ անհնարինության դեպքում Երեւանի քաղաքապետարանից հօգուտ Հրաչյա Վահանի Աղաբեկյանի բռնագանձել վերջինիս միջին աշխատավարձի 12-ապատիկի չափով գումար՝ որպես աշխատանքում չվերականգնելու հատուցում:

ԻՆՉ ՈՐՈՇՈՒՄ Է ԿԱՅԱՑՎԵԼ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ ապրիլի 14-ին՝ ուրբաթ օրը, ՀՀ քննչական կոմիտեն Միհր Սահակյանին հրավիրել է կոմիտե եւ մեղադրանք առաջադրել, որից հետո նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Ազգային ժողովը 65 կողմ ձայնով տվեց իր համաձայնությունը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Միհր Սահակյանի նկատմամբ քրեական վարույթ հարուցելու՝ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի միջնորդությանը:

Հայտնել էինք, որ մարտի 31-ին Ազգային ժողովի պետահիրավական մշտական հանձնաժողովի փակ նիստում Միհր Սահակյանը հարվածել էր ՔՊ-ական պատգամավոր Վլադիմիր Վարդանյանին: Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի (խուլիգանություն) 3-րդ մասով եւ 195-րդ հոդվածի (ֆիզիկական ներգործություն) 2-րդ մասի 1-ին կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Աննա Վարդապետյանն ապրիլի 11-ին խորհրդարանում ներկայացրեց Միհր Սահակյանի նկատմամբ քրեական վարույթ հարուցելու միջնորդությունը:

Միհր Սահակյանն ասել էր, որ կողմ է քվեարկելու իր նկատմամբ քրեական վարույթ հարուցելուն:

ԶԵԿՈՒՅՑ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԵՏ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի կառավարությունը մանրամասներ է ներկայացրել Ադրբեջանի հետ տարբեր ուղղություններով տարվող բանակցությունների վերաբերյալ:

Ինչպես նշված է ՀՀ կառավարության ծրագրի 2022 թվականի կատարման վերաբերյալ զեկույցում, Հայաստան-Ադրբեջան բանակցային գործընթացը տեղի է ունեցել հետեւյալ հիմնական ուղղություններով՝ Հայաստան-Ադրբեջան խաղաղության եւ հարաբերությունների հաստատման պայմանագիր, ԼՂ հիմնախնդրի կարգավորում, տարածաշրջանի տրանսպորտային եւ տնտեսական կոմունիկացիաների ապաշրջափակում, սահմանազատում եւ անվտանգություն, հումանիտար հարցեր:

Այս հարցերի քննարկման համար ՀՀ վարչապետի եւ Ադրբեջանի նախագահի մասնակցությամբ տեղի է ունեցել 3 եռակողմ հանդիպում Եվրոպական խորհրդի նախագահի միջնորդությամբ (2022 թվականի ապրիլի 6-ին, մայիսի 22-ին եւ օգոստոսի 31-ին Բրյուսելում), 2 քառակողմ հանդիպում Եվրոպական խորհրդի նախագահի եւ Ֆրանսիայի նախագահի միջնորդությամբ (որոնցից մեկը՝ հեռավար, մյուսը՝ Պրահայում՝ 2022 թվականի հոկտեմբերի 6-ին) եւ 1 եռակողմ հանդիպում ՌԴ նախագահի միջնորդությամբ (2022 թվականի հոկտեմբերի 31-ին Սոչիում): 2023 թվականի փետրվարի 18-ին Մյունխենում եւս 1 եռակողմ հանդիպում է տեղի ունեցել Ամերիկայի Միացյալ Նահանգների (այսուհետ՝ ԱՄՆ) պետքարտուղար Էնթոնի Բլինքենի միջնորդությամբ: ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը եւ Ադրբեջանի նախագահի արտաքին հարցերով խորհրդական Հիքմեթ Հաջիեւը ԱՄՆ եւ ԵՄ միջնորդությամբ հանդիպել են 4 անգամ, ՀՀ եւ Ադրբեջանի գլխավոր դատախազները ՌԴ միջնորդությամբ հանդիպել են երկու անգամ, ՀՀ եւ Ադրբեջանի արտաքին գործերի նախարարները ՌԴ, ԱՄՆ եւ այլ գործընկերների միջնորդությամբ հանդիպել են 6 անգամ:

Տեղի է ունեցել խաղաղության եւ հարաբերությունների հաստատման պայմանագրի վրա աշխատանքի երեք շրջափուլ, որի ընթացքում Հայաստանն ու Ադրբեջանը փոխանակել են դիտարկումներ եւ առաջարկություններ: ՀՀ-ն իր դիտարկումներն ու առաջարկություններն ադրբեջանական կողմին է փոխանցել 2023 թվականի փետրվարի 14-ին: ՀՀ-ի համար ընդունելի է այն մոտեցումը, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ պայմանագրի ստորագրումը կարող է առանձնացվել ԼՂ-ի հիմնախնդրի կարգավորման գործընթացից՝ այն տրամաբանությամբ, որ Ստեփանակերտի եւ Բաքվի միջեւ քննարկումների միջազգային մեխանիզմ կձեւավորվի: ՀՀ-ի համար էական է ԼՂ հայության անվտանգության եւ իրավունքների հասցեագրման երաշխավորված մեխանիզմների ձեւավորումը, որը կունենա միջազգային տեսանելիություն եւ ներգրավվածություն:

«Հայաստան-Ադրբեջան պայմանագրի համատեքստում՝ ՀՀ կառավարության համար առանցքային են ՀՀ-ի 29 800 քառակուսի կիլոմետր տարածքի անվտանգության երաշխիքների ձեւավորումը, պայմանագրի տեքստի շուրջ հնարավոր տարընթերցումների եւ վեճերի կարգավորման գործնական մեխանիզմի ձեւավորումը»,- ասված է զեկույցում:

2022 թվականի ընթացքում տեղի է ունեցել ՀՀ-ի, ՌԴ-ի եւ Ադրբեջանի փոխվարչապետերի համանախագահությամբ տարածաշրջանային տնտեսական եւ տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակման եռակողմ աշխատանքային խմբի երկու նիստ (ստեղծման օրվանից ի վեր տեղի է ունեցել 11 նիստ): Ապաշրջափակման թեման պարբերաբար քննարկվել է նաեւ այլ ձեւաչափերում: ՀՀ-ն հետաքրքրված է տարածաշրջանի տնտեսական եւ տրանսպորտային հաղորդակցությունների ապաշրջափակմամբ եւ պատրաստ է օր առաջ իրագործել այն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ «Հայկական խաչմերուկ» նախագծի շրջանակներում: Բեռների, ապրանքների եւ քաղաքացիների շարժի նոր հնարավորություններն ակնհայտորեն կմեծացնեն «Հայկական խաչմերուկի» գրավչությունը միջազգային եւ տարածաշրջանային ուղեւորափոխադրումների եւ բեռնափոխադրումների համար՝ էականորեն ընդգծելով Հայաստանի չիրացված լոգիստիկ դերը տարածաշրջանում, ինչն իր հերթին նաեւ հավելյալ անվտանգության եւ կայունության երաշխիքներ կապահովի:

2022 թվականի ընթացքում Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարան է ներկայացրել գանգատ՝ «Ռասայական խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի կիրառման վերաբերյալ: Գանգատը վերաբերում է ռասայական խտրականության բոլոր դրսեւորումներին՝ ատելության եւ հակահայկականության քարոզ՝ ներառյալ պաշտոնատար անձանց կողմից, հայկական մշակութային ժառանգության օբյեկտների պաշտպանության հարց, պատմության կեղծում, կրթական հաստատություններում հակահայկականության հետեւողական քարոզ, էթնիկ զտում, էթնիկ ատելության հիմքով խոշտանգումներ եւ վատ վերաբերմունքի դեպքեր, էթնիկ ատելության հիմքով սպանություններ, գլխատումներ եւ շատ այլ խախտումներ, որոնց կատարման մոտիվն էթնիկ հայերի նկատմամբ ատելությունն է: Սկզբնական հայցը ներկայացվել էր 2021 թվականի սեպտեմբերի 16-ին, ամբողջական հայցը ներկայացվել է 2023 թվականի հունվարի 23-ին: Դատական ատյաններում բոլոր միջպետական գանգատներով Հայաստանի կողմից բարձրացվել են եւ բարձրացվելու են գույքային եւ ոչ գույքային վնասների հատուցման պահանջներ:

ԼՈՒՐԵՐ

ԳՈՐԾՈՒՂՎՈՒՄ Է ՀՆԴԿԱՍՏԱՆ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը գործուղվում է Հնդկաստան:

Ավանեսյանը Հնդկաստանում կլինի ապրիլի 25-29-ը՝ մասնակցելու «Հնդկաստանի առողջապահության գերազանցություն-2023» գագաթնաժողովին:

Գործուղումից վերադառնալուց հետո նա եռօրյա ժամկետում վարչապետի աշխատակազմ եւ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի ու ֆինանսների նախարարություններ հաշվետվություն պետք է ներկայացնի:

ՌԴ ՊՆ–Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Ռուսական խաղաղապահ զորախումբը շարունակում է առաջադրանքներ իրականացնել Լեռնային Ղարաբաղի տարածքում:

Այս մասին հայտնում են ՌԴ ՊՆ հաղորդագրության մեջ՝ նշելով, որ 30 դիտակետերում ռուս խաղաղապահները շուրջօրյա վերահսկում են իրավիճակը եւ վերահսկում հրադադարի ռեժիմի պահպանումը:

Վերջին 24 ժամվա ընթացքում հրադադարի ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել:

Մարտակերտի, Մարտունու եւ Շուշիի շրջաններում պարեկություն է իրականացվել երեք երթուղիներով:

Ռուս խաղաղապահների անվտանգությունն ապահովելու եւ հնարավոր միջադեպերը կանխելու համար շարունակական փոխգործակցություն է պահպանվում Ադրբեջանի եւ Հայաստանի զինված ուժերի գլխավոր շտաբների հետ:

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ»

ՊԱՐՁՎԵԼ ԵՆ ՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժնում քննություն է իրականացվում՝ պարզելու «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող գրասենյակում հրազենային վնասվածքից տղամարդու մահվան հանգամանքները:

Այս մասին հայտնում է ՀՀ քննչական կոմիտեն:

2023թ ապրիլի 13-ին՝ ժամը 15:20-ին, շտապօգնության խմբից ՀՀ ոստիկանության ՕԿԿ ահազանգ է ստացվել այն մասին, որ Կոտայքի մարզի Ավան-Առինջ թաղամասի Մարշալ Բաբաջանյան փողոցում գտնվող, «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ին պատկանող գրասենյակում հայտնաբերվել է տղամարդու դի՝ գլխի շրջանում հրազենային վնասվածքով:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 155-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ, որի նախաքննության կատարումը հանձնարարվել է քննչական խմբին:

Նախաքննության ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ժամանակ դեպքի վայրում՝ դիակի մոտ, հայտնաբերվել եւ վերցվել է հանցագործության գործիք հանդիսացող, ՀՀ ՆԳՆ ոստիկանության ծառայողին ամրակցված ատրճանակը, իսկ նույն սենյակում հայտնաբերվել եւ վերցվել են նաեւ կրակված պարկուճը եւ գնդակը: Առգրավվել են վերջինիս հագին դեպքի պահին եղած հագուստները, դիակից վերցվել են նմուշներ:

Նշանակվել են դիակի դատաբժշկական, ինչպես նաեւ դատաձգաբանական, դատահետքաբանական, դատատոքսիկոքիմիական, դատաքիմիական, դատագենետիկական փորձաքննություններ:

Հսկող դատախազի նախաձեռնությամբ՝ ենթադրյալ հանցանքներին ՀՀ քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին եւ 337-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան իրավական գնահատական տալու համար փոփոխություն է կատարվել քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրության մեջ:

Քննությամբ պարզվել է, որ 2023թ. ապրիլի 13-ին ՀՀ ՆԳՆ ոստիկանության աշխատակիցը ծառայություն է իրականացրել Կոտայքի մարզի Ավան-Առինջ թաղամասի Մարշալ Բաբաջանյան փողոցում գտնվող, «Վեոլլա ջուր» ՓԲԸ-ին պատկանող պահեստների գլխավոր մուտքի մոտ գտնվող պահակակետում: Վերջինս, խախտելով զենքի պահպանման վերաբերյալ օրենսդրության պահանջները, ծառայողական զենքը չի պահել այնպիսի պայմաններում, որ բացառվի կողմնակի անձանց ձեռքն ընկնելու հնարավորությունը, ինչպես նաեւ զենքը թողել է առանց հսկողության: Մասնավորապես, վերջինս նշված ծառայողական զենքը պատյանից հանել ու դրել է բարձի տակ: Շուրջ 20 րոպե հանգստանալուց հետո նա դուրս է եկել պահակակետից, իսկ վերադառնալիս հանդիպել է «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության աշխատակցին ու նրա հետ բարձրացել պահակակետ սուրճ խմելու նպատակով: Որոշ ժամանակ անց, ծառայողական պարտականությունների կատարման հետ կապված, ոստիկանության ծառայողը դուրս է եկել պահակակետից: Այդ ընթացքում՝ ժամը 14:15-ի սահմաններում, այնտեղ գտնվող նշված ընկերության աշխատակիցը, օգտվելով ոստիկանության ծառայողի բացակայությունից եւ «Մակարով» տեսակի ատրճանակն առանց հսկողության թողնելու հանգամանքից, վերցրել է զենքը եւ ինքն իր գլխի հատվածում մեկ անգամ կրակելու միջոցով ինքնասպան եղել:

Ձեռք բերված փաստերի հիման վրա՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 337-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է հանրային քրեական հետապնդում: Նրան ներկայացվել է մեղադրանք, եւ որպես խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Նախաքննության ընթացքում պարզվել է նաեւ, որ տուժողը հաշվառված է եղել հոգեկան առողջության կենտրոնում:

Նախաքննությունը շարունակվում է:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ՏԵՍԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԳՐԱՎՎԵԼ Է



ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Արաբկիր վարչական շրջանի քննչական բաժնում իրականացվում են քննչական եւ վարութային գործողություններ՝ 36-ամյա տղամարդու կողմից մոր նկատմամբ սպանության փորձ կատարելու առերեւույթ դեպքի հանգամանքները պարզելու ուղղությամբ:

2023 թվականի ապրիլի 16-ին Երեւան քաղաքի Սեւքարեցի Սաքոյի փողոցում գործող հյուրանոցի աշխատակցից ահազանգ է ստացվել այն մասին, որ հիշյալ հյուրանոցում մի կին եւ տղամարդ, ներկայանալով մայր եւ որդի, համար են վարձակալել, որից հետո նշված համարից լսվել են ծեծի ձայներ: Մոտենալով սենյակին՝հայտնաբերել են կնոջը արյունոտ եւ ծեծի ենթարկված վիճակում:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 2023 թվականի ապրիլի 16-ին՝ժամը 13:00-ի սահմաններում, 74-ամյա կինը եւ վերջինիս 36-ամյա որդին այցելել են վերոհիշյալ հյուրանոց եւ համար են վարձակալել: Դրանից մեկ ժամ անց՝ վերջիններիս միջեւ ծագած վիճաբանության ժամանակ, որդին հարվածել է մորը, որից հետո դանակով կտրել է նրա պարանոցը եւ հյուրանոցի 4-րդ հարկի պատշգամբից նետվելով ներքեւ՝ փորձել է դիմել փախուստի: Վերջինս հայտնաբերվել է հյուրանոցի բակում՝ դանակը ձեռքին, եւ վնասազերծվել: Մայրը եւ որդին տեղափոխվել են բժշկական կենտրոններ:

Դեպքի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 9-րդ կետով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Նախաքննության ընթացքում կատարված դեպքի վայրի զննությամբ հյուրանոցի բակային հատվածից հայտնաբերվել եւ վերցվել են արնանման հետքեր, հանցագործության գործիք հանդիսացող դանակը, տարածքը տեսանկարահանող սարքերի տեսագրությունը պահպանող կրիչը, ինչպես նաեւ քննության համար հետաքրքրություն ներկայացնող այլ իրեր: Նշանակվել են դատաբժշկական, դատաքիմիական, դատագենետիկական, դատաքրեագիտական փորձաքննություններ:

36-ամյա տղամարդը ձերբակալվել է:

Վերջինիս եւ տուժողի հետ համապատասխան քննչական գործողություններ դեռեւս չեն արվել առողջական վիճակի պատճառով:

Դեպքի հանգամանքները պարզվում են, նախաքննությունը շարունակվում է:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԱԴՐԲԵՋԱՆՅՈՒՆ

ՀՀ ազգային անվտանգության ծառայության քննչական գլխավոր վարչությունում նախաձեռնված քրեական վարույթով հսկող դատախազի կողմից բավարարվել է վարույթն իրականացնող քննիչի միջնորդությունը. 2023 թվականի ապրիլի 11-ին որոշում է կայացվել Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի Ազշին Գաբիլի Բաբիրովի նկատմամբ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու եւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, մաքսային հսկողությունից թաքցնելով, ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու եւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ապօրինի հրազեն պահելու եւ փոխադրելու հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար հարուցել հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 340-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 335-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը վարույթն իրականացնող մարմնի կողմից Հուսեյն Ախունդովին ներկայացվել է մեղադրանք: Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

2023 թվականի ապրիլի 14-ին հսկող դատախազի կողմից բավարարվել է վարույթն իրականացնող քննիչի միջնորդությունը. որոշում է կայացվել Ադրբեջանի Հանրապետության քաղաքացի Հուսեյն Ահլիմանի Ախունդովի նկատմամբ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ՀՀ պետական սահմանն ապօրինի հատելու, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, մաքսային հսկողությունից թաքցնելով, ՀՀ պետական սահմանով հրազեն եւ ռազմամթերք ապօրինի տեղափոխելու եւ մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ ապօրինի հրազեն պահելու եւ փոխադրելու հանրորեն վտանգավոր արարքներ կատարելու համար հարուցել հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 469-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 340-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով եւ 335-րդ հոդվածի 2-րդ մասով: Նույն օրը վարույթն իրականացնող մարմնի կողմից Հուսեյն Ախունդովին ներկայացվել է մեղադրանք: Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ՝ մեղադրյալի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Դատախազությունը նշված հարցի կապակցությամբ պարբերաբար հանդես կգա հաղորդագրություններով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ ապրիլի 14-ից 17-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 119 դեպք, որոնցից 8-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ

Ապրիլի 14-ին Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանը Բերդ քաղաքում կայացած նիստում որոշել է երկու ամիս ժամկետով կալանք կիրառել Իջեւան քաղաքի 39-ամյա բնակիչ Սասուն Էդիլյանի նկատմամբ: Բանվորությամբ զբաղվող, շինարարական տարբեր աշխատանքներ կատարող, մանկահասակ երեք երեխաների հայր Սասուն Էդիլյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 198-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով («Սեռական հարաբերությունը կամ սեքսուալ բնույթի այլ գործողությունները, այդ թվում՝ սեռական հարաբերության նմանակումը կամ սեռական կարիքները բավարարելը, որոնք կատարվել են՝ հանցագործությունից տուժած անձի կամքին հակառակ կամ նրա կամքն անտեսելով, հանցագործությունից տուժած անձի կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հանցագործությունից տուժած անձի անօգնական վիճակն օգտագործելով, ընտանեկան դրությամբ կամ հաշմանդամությամբ պայմանավորված՝խոցելի վիճակում գտնվող անձի նկատմամբ»): Ենթադրյալ հանցագործությունը կատարվել է այս տարվա մարտին: Ս. Էդիլյանը մեղադրվում է Իջեւան քաղաքի բնակիչ 7-ամյա տղայի նկատմամբ սեռական բնույթի գործողություններ կատարելու համար: Նա չի ընդունում մեղադրանքը: Նրա ընտանիքի անդամի վկայությամբ՝ Սասուն Էդիլյանը անմեղ է, նշված հանցագործությունը 7-ամյա տղայի հնարածն է, երեխան առողջության հետ կապված խնդիրներ ունի, ենթադրյալ հանցագործությունը երեխայի երեւակայության արդյունքն է: Ս. Էդիլյանի շահերը պաշտպանում է Իջեւանցի փորձառու փաստաբան, որը ներկա է գտնվել նրան նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դատարան ներկայացված միջնորդության քննարկմանը: Ս. Էդիլյանի ընտանիքը վստահ է, որ նրան առաջադրված մեղադրանքը քննության ընթացքում կհերքվի:

ՎԱՏ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցների ուսուցիչների կամավոր ատեստավորման գործընթացին հայտագրվածների թվաքանակի, ատեստավորման արդյունքների վերաբերյալ տեղեկատվական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին: Մարզպետարանից ստացված պատասխանում նշված է, որ մարզի հանրակրթական դպրոցներից 2022 թվականին կամավոր ատեստավորման նպատակով հայտագրվել է ընդամենը 210 ուսուցիչ, մասնակցել՝ 122-ը, 47 ուսուցիչ 70-100 տոկոս արդյունք է ապահովել, որոնք էլ ստանում են համապատասխան հավելավճարներ: Տավուշի մարզի հանրակրթական 76 դպրոցներում դասավանդում է ընդհանուր թվով 1610 ուսուցիչ:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾ

ԻՐԱՑՐԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑ

Ոստիկանության Արարատի մարզային վարչության օպերլիազորներ Վ.Ս.-ն եւ Ս.Ք.-ն, հանցավոր համաձայնության գալով, 2022 թվականի հոկտեմբերի 3-ին ծեծի են ենթարկել ՔԿ Արարատի մարզային քննչական վարչության քննիչ Ն.Ք.-ին՝ դատճառելով թեթեւ վնաս՝ առողջության կարճատեւ խանգարում:

ԱԱԾ քննչական գլխավոր վարչությունում քննված վարույթով տվյալներ են ձեռք բերվել նաեւ այն մասին, որ օպերլիազոր Վ.Ս.-ն զբաղվել է թմրամիջոցի ապօրինի իրացմամբ. իր մտերիմ Մ.Գ.-ի օժանդակությամբ Գ.Պ.-ին է փոխանցել 0.52 գրամ Մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Պարզվել է նաեւ, որ օպերլիազոր Վ.Ս.-ն, 2009 թվականից ծառայելով Ոստիկանության համակարգում, իսկ 2018 թվականից զբաղեցնելով Արարատի մարզային վարչության ավագ օպերլիազորի պաշտոնը, տեղյակ լինելով իր մտերիմ Մ.Գ.-ի կողմից պարբերաբար գողություններ կատարելու եւ դրա արդյունքում ձեռք բերված առարկաների իրացման մասին, միջոցներ չի ձեռնարկել հանցագործությունների կանխարգելման, բացահայտման եւ Մ.Գ.-ին քրեական պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ:

Նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից մեղադրյալ Վ.Ս.-ի նկատմամբ ընտրվել է կալանք խափանման միջոցը. Վ.Ս.-ն ձերբակալվել եւ ներկայացվել է դատարան, սակայն Հակակոռուպցիոն դատարանը մերժել է կալանքը որպես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ միջնորդությունը, որի դեմ հսկող դատախազի կողմից ներկայացվել է հատուկ վերանայման բողոք:

2023 թվականի ապրիլի 10-ին Գլխավոր դատախազությունում ստացվել է քրեական վարույթը, որով մեղադրանք է ներկայացվել Ս.Ք.-ին՝ Քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից առողջությանը թեթեւ վնաս պատճառելը), Վ.Ս.-ին՝Քրեական օրենսգրքի 171-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից առողջությանը թեթեւ վնաս պատճառելը), 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 266-րդ հոդվածի 1-ին մասով (թմրամիջոցների ապօրինի իրացում), 308-րդ հոդվածի 1-ին մասով (պաշտոնեական լիազորությունները չարաշահելը): Մեղադրանք է ներկայացվել նաեւ Մ.Գ.-ին՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-266-րդ հոդվածի 1-ին մասով (թմրամիջոցների ապօրինի իրացմանն օժանդակելը):

Նույն օրը Գլխավոր դատախազությունում ստացվել է Վերաքննիչ քրեական դատարանի որոշումը՝ դատախազի կողմից հատուկ վերանայման բողոքը բավարարելու եւ օպերլիազոր Վ.Ս.-ի նկատմամբ որպես խափանման միջոց կալանքը կիրառելու վերաբերյալ:

Վ.Ս.-ն ներկայացել է քրեակատարողական հիմնարկ եւ կալանավորվել:

2023 թվականի ապրիլի 13-ին դատախազի կողմից հաստատված մեղադրական եզրակացությամբ քրեական վարույթը հանձնվել է Հակակոռուպցիոն դատարան:

ԼՈՒՐԵՐ

ԿԱՏԱՐԵԼ Է ՓԱՇԻՆՅԱՆԻ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԸ

Մարտի 26-ին Դիլիջան քաղաքում վերաբնակված ռուսների նախաձեռնությամբ եւ «Դիլիջան համայնքի կոմունալ սպասարկում» ՀՈԱԿ-ի աջակցությամբ՝ Դիլիջան քաղաքի Կալինինի, Շահումյան, Մյասնիկյան, Ուսանողական, Առաջին, Մոլդովական փողոցներում կատարվել են մաքրման աշխատանքներ: Այդ աշխատող խմբին միացել են վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ նրա կին Աննա Հակոբյանը: Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքը տեղեկացնում է. «ՀՀ վարչապետը հանձնարարել էր կարգի բերել Կալինինի 97 շենքի բակը, եւ Դիլիջան համայնքի ղեկավարի եւ «Եվրոասֆալտ» ընկերության, «Կոնդի առանձնատներ» ՊՈԱԿ-ի արագ արձագանքման արդյունքում բակն այսօր խնամված ու բարեկարգ տեսք ունի. տեղադրվել են նստարաններ, խաղարան, երկարակյաց եւ անթափատերեւ ծառեր: Դիլիջանի համայնքապետարանի կողմից բակերի բարեկարգման ծրագրերը շարունակական են լինելու: Քաղաքացիներին հորդորում ենք խնամքով ու սրտացավ վերաբերվել տարածքին ու նոր ձեւավորված միջավայրին»:



60 ՀԱԶ ՏՈՒԳԱՆՔ

Բերդ քաղաքի բնակիչ, նախկինում չդատապարտված, ոչ մի տեղ չաշխատող, 1981թ. ծնված Միհեր Առուստամյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ 2022թ. հունիսի 22-ին՝ ժամը 20:40-ի սահմաններում, Տավուշի մարզի Բերդ համայնքի Մաշտոցի փողոցում կենցաղային հարցերի շուրջ առաջացած վիճաբանության ժամանակ բռնի գործողություններ է կատարել իր մերձավոր ազգականի կնոջ նկատմամբ՝ պատճառելով ֆիզիկական ցավ: Մ. Առուստամյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 195 հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով: Նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը: Նախնական դատալսումների փուլում մեղադրյալ Միհեր Առուստամյանը ներկայացրել է արագացված վարույթ կիրառելու միջնորդություն, պաշտպան Ս. Ամիրյանը, հանրային մեղադրողը եւ տուժողը չեն առարկել միջնորդության դեմ:

2023թ. մարտի 30-ին Իջեւան քաղաքում Տավուշի մարզի առաջին ատյանի դատարանի դատավոր Արամ Մարտիրոսյանը վճռել է Միհեր Առուստամյանին մեղավոր ճանաչել առաջադրված մեղադրանքում, որպես պատիժ նշանակել տուգանք՝60 հազար դրամի չափով:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 37 ճՏՊ. 3 մարդ զոհվել է, 52-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է 252 ՌԱԶՄԱՄԹԵՐՔ

Ապրիլի 10-17-ն ընկած ժամանակահատվածում ՆԳՆ ԱԻ պետական ծառայության կենտրոնական ու տարածքային ստորաբաժանումների 911 ճգնաժամային կառավարման կենտրոններում գրանցվել է 870 զանգ, որից 25-ը՝ տեխնածին, 24-ը՝ կենցաղային բնույթի կանչեր են:

Արագ արձագանքման հատուկ ստորաբաժանման օպերատիվ խմբերը շաբաթվա ընթացքում կատարել են փակված 6 դռան եւ 11 վերելակի բացում: Փրկարարների օգնությամբ 4 քաղաքացի տեղափոխվել է բուժհաստատություն:

Հրշեջ փրկարարները կատարել են 7 ելք: Հրդեհի 4 դեպք է արձանագրվել Ստեփանակերտ քաղաքում, մեկական դեպքեր՝ Մարտունու, Ասկերանի եւ Մարտակերտի շրջաններում:

Հրդեհների բռնկման հիմնական պատճառ է հանդիսացել բնակիչների անուշադրությունը, այգիներում եւ խոտածածկ ենթատարածքներում կրակը չվերահսկելը: Բոլոր դեպքերով հրշեջ փրկարարների կողմից կանխարգելիչ գործողություններ են իրականացվել:

Մեկ շաբաթվա ընթացքում սակրավորները կատարել են 7 ելք: Հետախուզական աշխատանքների արդյունքում հանրապետության տարածքից հայտնաբերվել է շուրջ 252 միավոր տարբեր տեսակի ու տրամաչափի ռազմամթերք:

Շարունակվում են ՆԳ նախարարի եւ ԱԻՊԾ տնօրենի հրամանով հաստատված դասընթացներն ու պլանային միջոցառումները, ինչպես նաեւ քաղաքացիական պաշտպանությանն առնչվող ուսուցողական եւ իրազեկման միջոցառումները: Պարբերաբար անցկացվող դասընթացները նպաստում են փրկարար ծառայողների տեսական եւ գործնական հմտությունների կատարելագործմանը:

ՏՈՒԺԵԼ Է 30 ՄԱՐԴ

Բանգլադեշի արեւելքում մարդատար եւ բեռնատար գնացքի բախման հետեւանքով առնվազն 30 մարդ է տուժել:

Բախումը տեղի է ունեցել մայրաքաղաք Դաքայից 96 կմ դեպի արեւելք գտնվող Կումիլլա շրջանում: 70 կմ/ժ արագությամբ շարժվող մարդատար էքսպրեսը բախվել է կայարանում կանգնած բեռնատար գնացքին: Բախման հետեւանքով ռելսերից դուրս են եկել մարդատար գնացքի հինգ վագոն:

Հինգ տուժածներ՝ ծանր վնասվածքներով, հոսպիտալացվել են:

Ըստ նախնական վարկածի՝ բախումը տեղի է ունեցել կայարանում ազդանշանային համակարգի խափանման եւ երկաթուղու աշխատակիցների սխալների պատճառով:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ»-Ը ԿԱՆՑԿԱՑՆԻ ԱՃՈՒՐԴ՝ ՀՈԼԱՆԴԱԿԱՆ ԵՂԱՆԱԿՈՎ

2023թ.-ի մայիսի 02-ին՝ ժամը 11:00-ին, կազմակերպիչ «Յունիբանկ» ԲԲԸ կողմից ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում կանցկացվի աճուրդ՝ հոլանդական եղանակով:

Թիվ 16 լոտ՝ ոսկյա ջարդոն 24 գր. ընդհանուր քաշով, որից 10,5գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 10 գր.) 500 հարգի՝123.000 ՀՀ դրամ, 13,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 13 գր.) 585 հարգի՝189.700 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 312.700 ՀՀ դրամ:Թիվ 17 լոտ՝ ոսկյա զարդ 111,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 72 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.050.300 ՀՀ դրամ: Թիվ 21 լոտ՝ ոսկյա զարդ 19,4 ընդհանուր քաշով (զուտ քաշը 19 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 277.200 ՀՀ դրամ: Թիվ 20 լոտ՝ոսկյա զարդեր 17,5 գր. ընդհանուր քաշով, որից 10,4գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 10 գր.) 500 հարգի՝123.000 ՀՀ դրամ, 7,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 6,5գր.)585 հարգի՝94.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 217.800 ՀՀ դրամ: Թիվ 24 լոտ՝ոսկյա ջարդոն 14,3 գր. ընդհանուր քաշով, որից 6,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 6,3 գր.) 585 հարգի՝91.900 ՀՀ դրամ, 7,8 գր. քաշով ոսկյա ջարդոնը 958 հարգի՝186.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 278.500 ՀՀ դրամ:Թիվ 23 լոտ՝ ոսկյա ջարդոն 15,5 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 370.800 ՀՀ դրամ: Թիվ 25 լոտ՝ ոսկյա ջարդոն 10 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 239.200 ՀՀ դրամ: Թիվ 30 լոտ՝ոսկյա ջարդոն եւ զարդեր 195,4 ընդհանուր քաշով (զուտ քաշը 189,9 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 2.770.300 ՀՀ դրամ: Թիվ 33 լոտ՝ոսկյա զարդեր 52,1 գր. ընդհանուր քաշով, որից 43,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 41 գր.) 585 հարգի՝598.100 ՀՀ դրամ, 5,1 գր. քաշով ոսկյա զարդը 958 հարգի՝122.000 ՀՀ դրամ, 3,4 գր. քաշով ոսկյա զարդերը 500 հարգի՝41.800 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 761.900 ՀՀ դրամ: Թիվ 36 լոտ՝ ոսկյա ջարդոն եւ զարդեր 56,2 գր. ընդհանուր քաշով, որից 51,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 49,5 գր.) 585 հարգի՝722.100 ՀՀ դրամ, 2,9 գր. քաշով ոսկյա ջարդոնը 500 հարգի՝35.700 ՀՀ դրամ, 1,8 գր. քաշով ոսկյա զարդը 750 հարգի՝33.600 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 791.400 ՀՀ դրամ: Թիվ 37 լոտ՝ոսկյա զարդեր եւ ջարդոն 31,9 գր. ընդհանուր քաշով, որից 5 գր. քաշով ոսկյա ջարդոնը 999 հարգի՝125.900 ՀՀ դրամ, 26,9 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդերը (զուտ քաշը 25,6 գր.) 585 հարգի՝373.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 499.400 ՀՀ դրամ:Թիվ 50 լոտ՝ոսկյա ջարդոն 24,3 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 22 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 321.000 ՀՀ դրամ: Թիվ 40 լոտ՝ ոսկյա ջարդոն եւ զարդեր 146,2 գր. ընդհանուր քաշով, որից 7,1 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոնը (զուտ քաշը 7 գր.) 500 հարգի՝86.100 ՀՀ դրամ, 112,5 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդեր (զուտ քաշը 112գր.) 585 հարգի՝1.633.800 ՀՀ դրամ, 26,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա ջարդոն (զուտ քաշը 23,6 գր.) 585 հարգի՝344.200 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 2.064.100 ՀՀ դրամ: Թիվ 41 լոտ՝ ոսկյա զարդեր 74,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 74 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.079.500 ՀՀ դրամ: Թիվ 42 լոտ՝ ոսկյա զարդեր 81 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 78 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 1.137.800 ՀՀ դրամ: Թիվ 43 լոտ՝ոսկյա զարդեր 5 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 4,8 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 70.000 ՀՀ դրամ: Թիվ 44 լոտ՝ոսկյա զարդեր 51,9 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 51,4 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 749.800 ՀՀ դրամ: Թիվ 45 լոտ՝ ոսկյա զարդ 10,6 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 10,1 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 147.400 ՀՀ դրամ: Թիվ 46 լոտ՝ ոսկյա զարդ 15,4 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 15 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 218.800 ՀՀ դրամ:Թիվ 47 լոտ՝ ոսկյա զարդ 6,1 գր. քաշով 958 հարգի, լոտի մեկնարկային գինը 145.900 ՀՀ դրամ: Թիվ 48 լոտ՝ ոսկյա զարդ եւ ջարդոն 26,1 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 19,7 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 287.400 ՀՀ դրամ: Թիվ 49 լոտ՝ոսկյա զարդեր 24,7 գր. ընդհանուր քաշով, որից 18,1գր. քաշով ոսկյա զարդերը 500 հարգի՝222.600 ՀՀ դրամ, 6,6 գր. ընդհանուր քաշով ոսկյա զարդը (զուտ քաշը 6 գր.) 585 հարգի՝87.500 ՀՀ դրամ, լոտի մեկնարկային գինը 310.100 ՀՀ դրամ: Թիվ 50 լոտ՝ ոսկյա զարդեր 32,7 գր. ընդհանուր քաշով (զուտ քաշը 32 գր.) 585 հարգի, լոտի մեկնարկային գինը 466.800 ՀՀ դրամ:

Վերոնշյալ լոտերի մեկնարկային գինը, կապված աճուրդի օրվա դրությամբ ոսկու շուկայական գնի փոփոխության հետ, կարող է փոփոխվել մինչեւ մեկնարկային գնի 5 %-ի չափով: Լոտերը գրավի առարկա են, վիճակը՝ բարվոք: Աճուրդին մասնակցելու համար ներկայացնել անձնագիր, մասնակցի վկայական /տրամադրվում է տեղում/: Հաղթող է ճանաչվում առավելագույն գին առաջարկած մասնակիցը, նախավճարը՝ լոտի 5 տոկոսի չափով, վճարվում է կազմակերպչին աճուրդի բացումից առնվազն 30 րոպե առաջ. լոտի ուսումնասիրումը՝ մինչեւ աճուրդի բացմանը նախորդող յուրաքանչյուր երկուշաբթի եւ ուրբաթ օրերին՝ժամը 9.00-13.00-ն, ք. Երեւան, Չարենց 12 շ., թիվ 53, թիվ 1-5 հասցեում: Աճուրդի կանոնակարգին ծանոթանալու վայրը աճուրդի անցկացման վայրն է, պատճենը տրամադրվում է՝ դիմումի հիման վրա: «Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ԲԱՑ ԱՃՈՒՐԴ

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Բի էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կազմակերպիչ) «ԵՐԵՎԱՆԻ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ԲՈՐՍԱ» ՍՊԸ -ի հարթակում իրականացնելու է բաց աճուրդ՝ հոլանդական եղանակով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ բանկ) սեփականության իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը՝

- ք. Երեւան, Նոր-Նորք, Մառի փողոց, 11 շենք, 26 հասցեում գտնվող 94,48 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 28650000 ՀՀ դրամ:
- ՀՀ, Արմավիրի մարզ, համայնք Արմավիր, 1-ին փողոց, 34 հասցեում գտնվող 270 ք.մ. ճաշարան եւ 0,0226 հա հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝ 18850000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ հոլանդական եղանակով, ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 04.05.2023թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ հոլանդական եղանակով կայացվող աճուրդի յուրաքանչյուր հերթական փուլը կանցկացվի յուրաքանչյուր հաջորդ աշխատանքային օրը, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 29.12.2023թ: Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կանխիկի շեմը չգերազանցելու դեպքում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին), կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝ աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝ կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտի նախորդող օրը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝ այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի եւ Բորսայի հետ: Հարկային գործակալ հանդիսանալու դեպքում աճուրդում հաղթած մասնակցի կողմից լոտի գնի վճարելու կարգը սահմանվում է վաճառողի հետ՝ փոխհամաձայնեցված ժամկետներում: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին, լոտերի ամբողջական ցանկին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին եւ Բորսային՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.borsa.am կայքեր:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ՀԱԳԵՑԱԾ ՏԱՐԻ

ՀԱՅ ԿԻՆՈՆ 100 ՏԱՐԵԿԱՆ Է

ԿԳՄՍ նախարարը, պարգեւատրելով կինոգործիչներին, նշեց, որ երբ այսօր խոսում են հայ կինոյի 100-ամյակից, առաջին հերթին խոսում են կոնկրետ մարդկանց եւ նրանց ներդրման մասին, եւ պետք է արժեւորել այդ ներդրումը՝ արտահայտելով գնահատանքի այն ձեւերով, որոնք կան եւ գործում են: «Չնայած տեխնոլոգիաները եւ ժամանակները փոխվում են, բայց կինոն մեր կյանքում շարունակում է մնալ, կինոն ինչ-որ առումով ներկայացնում է նաեւ արվեստի դեմքը հանրության առաջ»,- ասաց նա:

Նա նշեց, որ հոբելյանի առթիվ ձեւավորվել է ՀՀ կառավարական հոբելյանական հանձնաժողով, որի գլխավորությամբ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը նախաձեռնել է տասնյակից ավելի միջոցառումներ եւ ծրագրեր: Ծրագրերն իրականացվելու են 4 ուղղություններով՝ ռազմավարական, միջազգային, հրատարակչական եւ ներպետական: Հոբելյանական տարվա մեկնարկը կտրվի ապրիլի 16-ին՝ Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում «Հանդիսավոր երեկո» միջոցառմամբ: Միջոցառումը կիրականացվի «խոսող» էկրանի միջոցով, որը միջոցառման ամբողջ ընթացքում «կշփվի հանդիսատեսի հետ» եւ առաջին դեմքով «կպատմի» կինոյի մասին՝ ներկայացնելով անցած ուղին ու սպասումները: Անդրադարձ կկատարվի նաեւ մուլտմիավորման 85-ամյակին: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արա Խզմալյանը, շնորհավորելով բոլորին կինոյի 100-ամյակի առթիվ, նշեց. «Կինոն միայն արվեստ չէ, այն անգերազանցելի լծակ, գործիքակազմ է երկրի միջազգայնացման, միջազգային համագործակցությունն ընդլայնելու եւ քաղաքական փափուկ ուժի կիրառման տեսակետից, եւ հենց այս գիտակցումից է, որ մենք հոբելյանական տարեթիվը դիտում ենք որպես կինոարվեստի եւ անցյալի վերաիմաստավորման եւ ներկայի խնդիրները մեղմացնելու, ինչպես նաեւ ապագան կանխանշելու մի փայլուն առիթ»,- ասաց Խզմալյանը: Անդրադառնալով հոբելյանական տարվա միջոցառումներին՝ Խզմալյանը կարեւորեց այն, որ միջոցառումները կիրականացվեն նաեւ մարզերում: ««Հայկական կինոդար» ծրագրով ՀՀ 10 մարզում կցուցադրվեն շուրջ 100 հայկական լիամետրաժ եւ կարճամետրաժ, դասական եւ ժամանակակից ֆիլմեր (անիմացիոն, վավերագրական, խաղարկային), որոնց թվում կլինեն նաեւ հայկական կինոժառանգության վերականգնված ֆիլմեր:

«Կինոդպրոց՝ Դեբետ համայնքում» եւ «Մարդը բարձրագույն արժեք է» ծրագրերով ՀՀ մարզերում կանցկացվեն կինոաշխատարաններ՝ մանկապատանեկան եւ երիտասարդ սերնդի համար: Երեւանում եւ մարզերում կիրականացվի «Մուլտիպլիկացիոն եւ անիմացիոն կինոյի շաբաթ» ծրագիրը, որի շրջանակում կցուցադրվեն հայկական մուլտիպլիկացիոն եւ անիմացիոն ֆիլմեր, կկայանան հանդիպումներ ստեղծագործական խմբերի հետ, կանցկացվեն վարպետության դասեր, տեղի կունենա երեկո՝ նվիրված Լեւ Ատամանյանին»,- ասաց Խզմալյանը: Նա նշեց, որ «Սամուել Խաչիկիան-100» ֆիլմերի հետահայացք ցուցադրությունն առաջին անգամ կբացահայտի իրանահայ ամենանշանավոր ռեժիսոր Սամուել Խաչիկիանի ստեղծագործական ժառանգությունը, որի լավագույն նմուշներն ամբողջացնում են իրանական կինոյի ոսկե ֆոնդը:

«Հայ կինոյի 100-ամյա հոբելյանական ծրագիրը ներառում է նաեւ հեռուստատեսային բովանդակություն՝ «Եվ լողում է նավը» հեռուստահաղորդումը, որը նվիրված կլինի հայկական ժամանակակից կինոյին եւ հեղինակներին: Հայաստանի հանրային հեռուստաընկերությունը նախատեսում է հայկական կինոյի երախտավորներին նվիրված ֆիլմաշար, հայկական ֆիլմերի շաբաթական ցուցադրություններ եւ այլ նախագծեր»,- ասաց նա:

Խզմալյանը հավելեց նաեւ, որ Հայ կինոյի 100-ամյա հոբելյանի համատեքստում հարգանքի տուրք կմատուցվի նաեւ կենդանի լեգենդ Արտավազդ Փելեշյանին՝ 85-ամյա հոբելյանի կապակցությամբ: Հայաստանի ազգային կինոկենտրոնի տնօրեն Շուշանիկ Միրզախանյանը նշեց, որ վերջին տարիներին բավականին ակտիվացել է կինոգործունեությունը միջազգային եւ համաշխարհային հարթակներում՝ ընդգրկվելով տարբեր կարեւոր կինոթառատոններում: «Միջազգային միջոցառումների շրջանակում Հայաստանի կինոոլորտի ներկայացուցիչները կմասնակցեն Կաննի միջազգային կինոփառատոնին կից «Marche du Film» կինոշուկային, ինչպես նաեւ կինոփառատոնի «Cannes Classics» ծրագրում կցուցադրվի հայկական կինոժառանգության լավագույն ֆիլմերից մեկը՝ «Բարեւ, ես եմ» (ռեժ. Ֆ. Դովլաթյան, 1965 թ.): Ինչպես նաեւ Հայ կինոյի 100-ամյակն ընդգրկվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների 2022-2023 թթ. օրացույցում»,-ասաց կինոկենտրոնի տնօրենը: Հայաստանի կինոգործիչների միության նախագահ Հարություն Խաչատրյանն էլ ուրախությամբ նշեց, որ հոբելյանի շրջանակում Կինոմիության դիմաց կստեղծվի աստղերի պուրակ: Նա ընդգծեց, որ վերջին տարիներին կինոգործիչների միությունում իրականացվել են հսկայական փոփոխություններ, այսինքն՝ հայկական կինոյի համար կա հարթակ, որը վերաձեւափոխվել է, ստեղծվել են ժամանակակից տեխնիկայով հագեցած դահլիճներ, որոնք կարող են լավագույն ձեւով ներկայացնել ե՛ւ փառատոնները, ե՛ւ ֆիլմերը, քննարկումները եւ այլն: «Հայաստանում պետական աջակցությամբ իրականացվող միջազգային կինոփառատոների ծրագրերը եւս հագեցած են 100-ամյա հոբելյանական միջոցառումներով: Նախատեսվում են «Ոսկե ծիրան» միջազգային 20-րդ, «ՄԷԿ ԿԱԴՐ» կարճ ֆիլմերի 21-րդ, «Ծիրանի ծառ» վավերագրական ֆիլմերի 9-րդ, «ՌԵԱնիմանիա» միջազգային անիմացիոն կինոյի եւ պատկերապատման արվեստի 15-րդ եւ «Ռոլան» մանկապատանեկան ֆիլմերի 19-րդ միջազգային կինոփառատոները»,- եզրափակեց Հարություն Խաչատրյանը:

ՏԵՍԱՐԱՆ

ԻՆՉ Է ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԴԵՐԱՍԱՆԸ

Հայտնի կինոռեժիսոր Քվենտին Տարանտինոն պատմել է, թե ինչու չի ընդգրկում սեխ տեսարաններ իր ֆիլմերում, եւ պատճառն ավելի պարզ է, քան դուք կարծում եք:

«Սեքսը կինոյի մասին իմ տեսլականի մաս չէ»,- ասել է 60-ամյա Տարանտինոն Diari ARA օրաթերթին: «Ճշմարտությունն այն է, որ նման տեսարաններ իրական կյանքում շատ դժվար են նկարահանվում. բոլորը շատ լարված են: Եվ եթե նախկինում դա անելը փոքր-ինչ խնդրահարույց էր, ապա այժմ ավելի դյուրին է:

Ռեժիսորը, սակայն, նշել է, որ եթե իր ֆիլմի համար ինտիմ տեսարան անհրաժեշտ լիներ, ինքը դա կաներ, բայց նման անհրաժեշտություն չի եղել:

Նրա՝ 1997 թվականին նկարահանված «Ջեքի Բրաուն» ֆիլմը միակն է, որտեղ ներկայացված է Բրիջիթ Ֆոնդայի եւ Ռոբերտ Դե Նիրոյի միջեւ գայթակղիչ տեսարան: Ինչպես հայտնում է The Hollywood Reporter-ը, Տարանտինոն աշխատում է իր նոր՝ «Կինոքննադատ» ֆիլմի վրա: Թեեւ առաջիկա նախագծի մասին շատ մանրամասներ չկան, նա իսպանական թերթին ասել է, որ ֆիլմի գլխավոր քննադատը կին է լինելու:

Տարանտինոն ներկայումս շատ ժամանակ է անցկացնում Թել Ավիվում, բայց դեռեւս անշարժ գույք ունի Լոս Անջելեսում եւ Նյու Յորքում: Ռեժիսորն ամուսնացած է իսրայելցի երգչուհի Դանիելլա Փիկի հետ: Նրանք ամուսնացել են 2018 թվականին եւ ունեն երկու երեխա:

ԼՈՒՐԵՐ

«ԵՍ ԳԱԼԻՍ ԵՄ ՔՈ ԹԱԳԻ ՀԵՏԵՎԻՑ»

Ալեքսիս Օհանյանն Ամերիկայի ամենահաջողակ ներդրողներից եւ ձեռներեցներից մեկն է, սակայն, 2017 թվականից ի վեր Օհանյանը թենիսի լեգենդ Սերենա Ուիլյամսի հետ ամուսնության շնորհիվ, դարձել է թենիսի աշխարհի շատ քննարկվող դեմք: Համաշխարհային լրատվամիջոցները ժամանակ առ ժամանակ ուշադրություն են դարձնում նաեւ Օհանյանի հայկական արմատներին:

Օհանյանը վերջերս պատահաբար հանդիպել է «Ալեքսեյ Օհանյանի ազգությունն ու կրոնը. ինչպե՞ս նա դարձավ չորրորդ ամենահայտնի հայ անձը» վերնագրով հոդվածին: Նա հոդվածը հրապարակել է Twitter-ում, որն, ըստ երեւույթին, մեծապես զվարճացրել է նրան:

Օհանյանը պարզապես չի կարողացել թաքցնել, թե որքան զվարճալի է իր համար դա, եւ կիսվել է սքրինշոթով: Նա նաեւ զարմացել է. «Ինչո՞ւ են ընդհանրապես գրել այս հոդվածը»:

Ի պատասխան՝ ամերիկյան գործարար աշխարհում հայտնի դեմք Քիմ-Մայ Կաթլերը գրել է. «Այժմ պետք է Ձեր կենսագրության մեջ ավելացնել «4-րդ ամենահայտնի հայը»»: Օհանյանը պատասխանել է. «Վերջ, @KimKardashian, ես գալիս եմ քո թագի հետեւից»:

ՊԱՀՊԱՆՈՒՄ Է ՄԱՐԶԱՎԻՃԱԿԸ

Ջենիֆեր Լոպեսն ունի առօրյա ռեժիմ, որն օգնում է նրան 54 տարեկանում պահպանել մարզավիճակը: Ջ. Լոյի առօրյան ներառում է վաղ առավոտյան մարզումներ, ինչպես նաեւ երեկոյան լավ ժամանակի անցկացումը երեխաների եւ ամուսնու՝ Բեն Աֆլեքի հետ:

Լոպեսն իր օրը սկսում է մարզանքով եւ խնամքով, որը ներառում է աղոթք եւ մեդիտացիա: Նա հայտնի է իր զբաղված գրաֆիկով ու բազմաբնույթ առաջադրանք կատարելու ունակությամբ, իսկ ժամանակ խնայելու համար շպարվում է մեքենայում:

Երեկոյան նա հանգստանում է եւ ժամանակ անցկացնում երեխաների հետ: Առավոտյան Ջենիֆեր Լոպեսը պտտվում է իր երեխաների շուրջ: Նա կա՛մ հավաքում է նրանց դպրոցի համար, կա՛մ նախաճաշ է պատրաստում: Երբ երեխաները գնում են դպրոց, նա կենտրոնանում է մարզվելու վրա, որը տեւում է մինչեւ մեկ ժամ ու քառորդ, այնուհետեւ ժամանակ է հատկացնում աղոթքի եւ մեդիտացիայի համար նախքան իր մաշկը խնամելը: «Ես չեմ նայում իմ հեռախոսին,- ասում է նա Instagram-ի տեսանյութում:- Պարզապես պատրաստվում եմ օրվան՝ ճիշտ մտադրություններով եւ մտքերով»:

Ջեյ Լոն միշտ օգտագործում է իր ապրանքանիշի արեւապաշտպան քսուքը, որը «20-30 տարեկանից իր գեղեցկության գաղտնիքներից մեկն է եղել»:

● *Ապրիլի 17-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «Էվոլյուցիա» հումորային ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000-6000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ երբ է իրականացվում հաշմանդամություն ունեցող անձի վերափոխմանությունը:

Լիպարիտ Դանիելյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Լ. Դանիելյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ հաշմանդամ ճանաչված անձը կրկին բժշկասոցիալական փորձաքննության է ենթարկվում՝ անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա կամ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

Անձի կամ նրա ներկայացուցչի դիմումով վերափորձաքննությունն իրականացվում է հաշմանդամության խմբի կամ «հաշմանդամ երեխա» կարգավիճակի համար սահմանված ժամկետը լրանալու, անձի առողջական վիճակը վատթարանալու կամ օրգանիզմի ֆունկցիայի վերականգնման, իսկ փորձաքննական որոշման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում կեղծիք հայտնաբերվելու կամ հաշմանդամության խմբի որոշման սահմանված կարգի խախտման դեպքերում՝ նաեւ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնի նախաձեռնությամբ:

Անձին հաշմանդամություն սահմանելու նպատակով բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնում են բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմինները՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գրասենյակի համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը եւ տարածքային բժշկասոցիալական փորձաքննական բաժինները:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ հաշվառում չունեցող անձինք կարող են ենթարկվել բժշկասոցիալական փորձաքննության՝ ներկայացնելով տեղեկանք փաստացի բնակության վայրից: Օտարերկրյա պետության քաղաքացիները Հայաստանի Հանրապետությունում կարող են անցնել բժշկասոցիալական փորձաքննություն, եթե տվյալ պետության հետ Հայաստանի Հանրապետությունն ունի համապատասխան միջպետական պայմանագիր:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Հետաքրքիր է իմանալ՝ արդյոք պետք է անշարժ գույքի պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմումները ներկայացվեն այն սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ, որի սպասարկման տարածքում գտնվում է դիմումի առարկա անշարժ գույքը:

Մետաքսյա Արիստակեսյան (43 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հայտնում ենք, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները կարող են ներկայացվել Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Նույնը վերաբերում է նաեւ ներկայացված դիմումի հիման վրա կազմված փաստաթղթերի ստացմանը, որոնք կրկին կարելի է ստանալ ինչպես դիմումը ընդունած, այնպես էլ ցանկացած այլ սպասարկման գրասենյակից կամ օպերատորի մասնաճյուղից:

Կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմողներին տրամադրվող ստացականում նշվում է դիմումի մուտքագրման համարը, որը միաժամանակ հանդիսանում է նաեւ ծածկագիր, որի օգնությամբ դիմողը հնարավորություն կունենա ՀՀ կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով հետեւել իր դիմումի քննարկման ընթացքին:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

«Կոչումը կին՝ ոսկե կոդ» համահայկական մրցանակաբաշխության հատուկ մրցանակը՝ Գրան պրին, շնորհվել է «Մուլտի ագրո» գիտաարտադրական կենտրոնի գլխավոր տնօրեն Ռոզա Ծառուկյանին: Մրցանակի հանձնման հանդիսավոր արարողությանը նախ ներկայացվել է նրա գործունեության վերաբերյալ փոքրիկ ֆիլմ, այնուհետեւ ելույթ է ունեցել նաեւ ինքը՝ Ռոզա Ծառուկյանը. «Հոգաչափ շնորհակալ եմ: Առ այսօր ինչպես աշխատել եմ, խոստանում եմ ուժերիս ներածին չափ լինել այն, ինչ եղել եմ առ այսօր: Խաղաղություն եմ ցանկանում»:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայամամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 + 3 +14 + 18
Կոտայքի լեռներ	+ 1 + 3 +13 + 16
Կոտայքի նախալեռներ	+ 6 + 8 +17 + 20
Գեղարքունիք	0 + 5 +14 + 17
Լոռի	+ 2 + 5 +14 + 17
Տավուշ	+ 5 + 8 +15 + 18
Արագածոտնի լեռներ	0 + 3 +12 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 5 + 8 +18 + 22

Արարատ	+ 6 + 9 +20 + 23
Արմավիր	+ 5 + 8 +22 + 24
Վայոց ձորի լեռներ	- 1 + 1 +13 + 16
Վայոց ձորի նախալեռներ	+ 6 + 9 +22 + 24
Սյունիքի հովիտներ	+ 4 + 7 +17 + 20
Սյունիքի նախալեռներ	+ 1 + 3 +13 + 16
Արցախ	+ 4 + 8 +15 + 18
Երեւան	+ 7 + 9 +21 + 23

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 17.04.2023
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, վ. Հանքարծոնյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*